# ՊԱՅՔԱՐԻ ՇԵՇՏԱԴՐՈՒՄԸ ՓՈԽԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Posted on April 21, 2010 by Keghart*

**Category:** Opinions

Հեղինակ՝ Արա Պապյան, Երեւան, Հայաստանի Հանրապետություն, Ապրիլ 2010

**Հայոց Ցեղասպանութեան 95-ամյակին Ընդառաջ**

Հայոց ցեղասպանության ճանաչումը նպատակ է, թե՞միջոց: Վստահաբար մեծամասնությունն անվարան կպատասխանի՝ միջոց: Հետեւաբար, քանի որ ցեղասպանության ճանաչումն ինքնանպատակ չէ, ուստի ցանկացած ցեղասպանության ժխտման հակառակը ցեղասպանության պարզ ճանաչումը չէ, այլ ճանաչման միջոցով հանցագործի պատիժը (մեր դեպքում թեկուզեւ բարոյական) եւ զոհի իրավունքների (այդ թվում նաեւ գույքային) հնարավորինս վերականգնումը:

Հեղինակ՝ Արա Պապյան, Երեւան, Հայաստանի Հանրապետություն, Ապրիլ 2010

**Հայոց Ցեղասպանութեան 95-ամյակին Ընդառաջ**

Հայոց ցեղասպանության ճանաչումը նպատակ է, թե՞միջոց: Վստահաբար մեծամասնությունն անվարան կպատասխանի՝ միջոց: Հետեւաբար, քանի որ ցեղասպանության ճանաչումն ինքնանպատակ չէ, ուստի ցանկացած ցեղասպանության ժխտման հակառակը ցեղասպանության պարզ ճանաչումը չէ, այլ ճանաչման միջոցով հանցագործի պատիժը (մեր դեպքում թեկուզեւ բարոյական) եւ զոհի իրավունքների (այդ թվում նաեւ գույքային) հնարավորինս վերականգնումը:

Կարող է արդյո՞ք ցեղասպանության ճանաչումը վերահաստատել արդարությունը, քանի դեռ հանցագործը կամ նրա սերունդները շարունակելու են վայելել հանցագործության պտուղները: Ընդ որում, հանցագործության պտուղները վայելող սերունդները ոչ թե հանցագործների պարզ հետնորդներ են, այլեւ հանցակիցները: Այսու, անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ որոշ հարցերի.
1. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության տարածքային եւ հայերի գույքային իրավունքները, ինչպես նաեւ բարոյական կորուստները, կարող են վերկանգնվել միայն Հայոց ցեղասպանության ճանաչման ճանապարհով, թե՞ կա այլ ուղի եւս:

2. Ի՞նչ ծավալի իրավունքների եւ գույքի մասին է խոսքը:

1. Ցեղասպանությունը մարդկայնության դեմ ուղղված հանցագործության (crime against humanity) տարատեսակ է: Թերեւս ամենածանր տարատեսակն է, բայցեւայնպես, պատասխանատվության առումով այն համարժեք է նմանաբնույթ մյուս հանցագործություններին: Միջազգային իրավունքը հստակորեն ամրագրել է, որ ***“բնաջնջումը, ստրկացումը, <u>աքսորը</u>, եւ որեւէ քաղաքացիական բնակչության դեմ իրականացված այլ անմարդկային արարքները պատերազմից առաջ կամ ընթացքում”*** հանդիսանում են հանցագործություններ մարդկայնության

դեմ (crimes against humanity). (1) Անվիճելի իրողություն է. թուրքերը ժխտելով Հայոց ցեղասպանությունը, ընդունում են, որ իրենց նախնիներն Օսմանյան կայսրության հայազգի քաղաքացիական բնակչությանն աքսորել են:

Պահպանվել է Օսմանյան կայսրության այն օրենքը (Tehcir Law), որի հիման վրա իրականացվել է հայերի աքսորը: Օրենքն ընդունվել է Օսմանյան խորհրդարանի կողմից 1915թ. մայիսի 27-ին եւ ուժի մեջ է մտել *Թաքվիմ-ի վեքայի* պաշտոնա-թերթում 1915թ. հունիսի 1-ին տպագրվելուց հետո: Օրենքի ամբողջական անվանումն է. "*Պատերազմական իրավիճակի եւ հրատապ քաղաքական անհրաժեշտության պատճառով այլ վայրեր աքսորվող հայերի տարաբնակեցման կարգ*:" (*"Regulation for the settlement of Armenians relocated to other places because of war conditions and emergency political requirements"*)

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ որեւէ պատճառաբանություն կամ պատրվակ աքսորն իրականցրած պետությանը, որը գործել է հանցագործ իշխանության միջոցով, չի ազատում պատասխանատվությունից եւ տուժողներին համարժեք հատուցում տալու պարտավորությունից: Հայերի պարագային թուրքական պետության հանցանքը բարդանում է նաեւ նրանով, որ աքսորի ժամանակ պետությունը հստակ քաղաքականություն է իրականացրել աքսորյալների մեջ մահացու ելքերը շատացնելու համար:

2. Հայության իրավունքների եւ սեփականության հարցն ունի երեք մակարդակ. ազգային կամ պետական, համայնքային կամ կազմակերպված խմբերի, անհատական կամ մասնավոր: Առաջին դեպքում ամեն ինչ հստակ՝ կա կատարման համար պարտադիր միջազգային վճիռ, որով հստակեցված է Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի սահմանը: Հայաստանի Հանրապետության հողային իրավունքների մասին, որոնք խարսխված են առաջին հերթին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռի վրա (առիթներ ունեցել եմ հանդես գալու, ուստի դրան այսօր չեմ անդրադառնա): Առանց ժխտելու Հայոց ցեղասպանության հնարավորինս լայն ճանաչման քաղաքական անհրաժեշտությունը, հարկ է նշել, որ իրավական տեսանկյունից Հայաստանի Հանրապետության տիտղոսի, այն է հողային իրավունքների վերականգնման, տեսանկյունից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը բնավ նախապայման չէ:

Հայաստանի Հանրապետության տարածքային իրավունքները ճանաչված են ցեղասպանության իրողությունից անկախաբար: Հայության համայնքային եւ անհատական գույքային իրավունքների վերականգնման համար ցեղասպանության ճանաչման հարցը նույնպես բնավ նախապայման չէ: Այս հարցի կապակցությամբ անհրաժեշտ է անել մի հստակեցում. հայերից *ապօրինի բռնագրավված գույքի* հարցում չի գործում որեւէ ժամանակային սահմանափակում, քանի որ օրինախախտումն ունի

շարունակական բնույթ: Բոլոր այն դեպքերում, երբ գույքը բռնագրավվել է առանց *համարժեք* հատուցման, այսինքն օրինախախտմամբ, ապա ներկա տնօրինումը չի կարող օրինական իրավատիրության հիմք հանդիսանալ:

Հայերից ապօրինի բռնագրավված գույքի գնահատման հարցը բարդ խնդիր է: Չնայած կատարված որոշակի աշխատանքին, մեր պատկերացումները տվյալ հարցի վերաբերյալ դեռեւս խիստ հատվածական են: Օրինակ, միայն 1916թ. Բեռլինի Ռեյսխբանկին (ReichsBank) Օսմանյան կայսրությունից փոխանցած 33 տոննա ոսկու (ներկա գներով ավելի քան մեկ միլիարդ ԱՄՆ դոլար) մեծ մասը, թերեւս ամբողջությամբ, ապօրինի բռնագրավվել էր հայերից:(2) Առ այսօր Թուրքիան չի բացահայտել Օսմանյան կայսրության զանազան բանկերում, ինչպես նաեւ օտարերկրյա բանկերի թուրքական մասնաճյուղերում, պահվող հայկական հաշիվների անվանացանկերը եւ գումաների չափը:

Որքան այսօր դժվար է փաստել սեփականության իրավունքը, հստակեցնել անհատական գույքի գինը եւ հետամտել կորուստը, նույնքան էլ դյուրին է դա անել համայնքային սեփականության հարցում: Քանի որ Օսմանյան կայսրությունը կառուցված էր ազգային/կրոնական սկզբունքով եւ լուսավորչական հայերը ներառված էին մեկ՝ **էրմենի միլիեթի** մեջ, ապա նրանց եկեղեցիները, վանքերն ու դպրոցները հաշվառված էին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանում: Մինչ այժմ կան տարբեր հաշվարկներ, ներառյալ 1919թ. Փարիզի վեհաժողովին հայկական պատվիրակությունների ներկայացրած տեղեկանքները:

Թերեւս ամենաամբողջականը Ռայմոն Գեւորգյանի եւ Փոլ Փապուճեանի (3) հաշվարկներն են, քանի որ դրանք հիմնված են պատրիարքարի չհրատարակված արխիվների վրա: Ըստ այդ հաշվարկների 1913-14թթ. առաքելական հայերն ունեին 2538 գործող եկեղեցի, 451 վանք եւ գրեթե 2000 դպրոց: Այս հաշվարկի մեջ չեն մտնում Օսմանյան կայսրության հայ կաթողիկե համայնքի եւ հայ ավետարանականների հոգեւոր հաստատություններն ու դպրեցները, ինչպես նաեւ Ռուսական կայսրության Կարսի, Սուրմալուի եւ Բաթումի վարչական միավորների հայապատկան գույքը:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է անել հետեւյալ եզրակացությունները.

Հայոց իրավունքներին տեր կանգնելու համար բնավ պարտադիր չէ, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը լինի համընդհանուր: Հայազգի քաղաքացիական բնակչության աքսորը նույնքան պատասխանատվություն է դնում թուրքական պետության վրա եւ պարտավորեցնում հատուցել աքսորյալների կամ նրանց ժառանգների կորուստները, որքան ցեղասպանության փաստը:

Օսմանյան կայսրության հայ համայքի իրավունքները ամրագրված են եղել ըստ երկրի գործող օրենսդրության եւ թուրքական պետության կողմից հետագա բոլոր անօրինական զավթումները չեն զրկում նրան իր իրավունքից: Անօրինական

բռնագրավումները սեփականության իրավունքի փոխանցման օրինական հիմք չեն կարող հանդիսանալ: Թուրքիայի Հանրապետության 1926-27թթ. օրենքներն ու հրամանագրերը՝ ուղղված կրոնական փոքրամասնությունների գույքի բռնագրավմանը, չեն կարող օրինական հիմք հանդիսանալ, քանի որ հակասում են Թուրքիայի Հանրապետության ստանձնած միջազգային պարատավորություններին՝ Լոզանի պայմանագրի 38-45 հոդվածներին: Նշյալ պարտավորությունները ենթակա չէին եւ ենթակա չեն փոփոխության կամ անտեսման, քանի որ նրանց, ըստ նույն պայմանագրի 37-րդ հոդվածի, տրված է հիմնական օրենքի (սահմանադրության) կարգավիճակ:

Եթե Թուրքիան իր ապագան տեսնում է Եվրամիության կազմում, ինչպես բազմիցս է հայտարարել, ապա պիտի ընդունի Եվրամիության արժեքները: Ի շարս այլ բաների, պիտի պատրաստ լինի պատասխանատվություն կրել սեփական պետության եւ նրա իրավանախորդի արարքների համար: Պիտի օրինական տերերին վերադարձնի ապօրինի բռնագրավված գույքը, պիտի դադարեցնի այլ պետությունների տարածքների բռնազավթումը, պիտի դադարի խոսել ուժի դիրքերից եւ սպառնալիքի լեզվով:

---

1. Article 6 (c) of the Charter of the International Military Tribunal, annexed to Agreement for the Prosecution and Punishment of the Major War Criminals of the European Axis ("London Agreement"), 8 August 1945.

2. Shavarch Toriguian, *The Armenian Question and International Law*, Beirut, 1973, pp. 107-8.

3. Raymond H. Kevorkian and Paul B. Paboujian, *Les Armeniens dans L'Empire Ottoman a la veille du Genocide*, Paris, 1992.